ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/70

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի, Հ. Լևոնյանի,

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ՝ Դ. Քարտաշյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.06.2019թ. թիվ 26/26-1/9185-2019 գրությամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 27.05.2019թ. թիվ 08/15.3/7004-19 գրության հիման վրա, 03.06.2019թ. «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 27.05.2019թ. թիվ 08/15.3/7004-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ. թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Նշված կազմակերպությունը պայմանագրերով սահմանված ժամկետներում չի կատարել իր պարտավորությունները, ինչի արդյունքում Նախարարությունը՝ հիմք ընդունելով կնքված պայմանագրի 2.1.3 կետի դրույթները, միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.06.2019թ. գրությամբ դիմել է «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2019թ. թիվ

26/26-1/9185-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«2019թ.ապրիլի 15-ին «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն աշխատանքները նախատեսվել են մինչն 2019թ. մայիսի 15-ը:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի և ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև 15.04.2019թ. կնքված՝ ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ձեռքբերման «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է Պայմանագրի 2.1.3-րդ կետի ուժով:

Մասնավորապես, պայմանագիրը միակողմանի լուծման գրությամբ Պատվիրատուն «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ (հրապարակված է www.gnumner.am կայքում 27.05.2019թ.) հայտնել է հետևյալը. «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2019 թվականի

մայիսի 22-ը պետք է իրականացներ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել: Հիմք ընդունելով «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով կնքված պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որոշեց 2019թ.-ի մայիսի 27-ին միակողմանի լուծել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով գնման պայմանագիրը»:

Համաձայն «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագրի թիվ 2.1.3 կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ. խախտել է աշխատանքի կատարման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սուռանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կայմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի և ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև 15.04.2019թ. կնքված ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500- կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ծեռք բերման «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների

նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է Պայմանագրի 2.1.3-րդ կետի ուժով:

Համաձայն՝ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագրի թիվ 2.1.3 կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա. կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ. խախտել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Համաշինախագիծ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ժամկետներում ներկայացվել է Պատվիրատուին կատարված աշխատանքները, սակայն ամեն անգամ Պատվիրատուն չի ընդունել աշխատանքները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանին 23.05.2019թ. է ներկայացվել գրություն, որով մասնավորապես հայտնել ենք /կցվում է/՝

Ձեզ եմ ներկայացնում «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքները: Կից ներկայացնում եմ

- *Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը հինգական թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով,*
- *Փորձաքննության եզրակացություն 1 օրինակ:*

Սակայն անհասկանալի պայմաններում՝ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվություն համաձայն «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է Պայմանագրի 2.1.3-րդ կետի ուժով՝ պայմանագրով նախատեսված ժամկետի ուշացման հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ փաստացի 27.05.2019թ. այսինքն պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո, Պատվիրատուի և Ընկերության միջև շարունակվել են պայմանագրային հարաբերությունն, մասնավորապես, ՀՀ տրանսպորտի, կապի և

տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից շարունակվել է ընդունվել կատարված աշխատանքները, մասնավորապես 05.06.2019թ. թիվ 08/14.1/7229-19 գրությամբ Պատվիրատուն հայտնել է /կցվում է/ հետևյալը.

Ի պատասխան Ձեր 2019թվականի մայիսի 27-ի Ի-1 34/19 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4 պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 2019 թվականի մայիսի 27-ին միակողմանի լուծվել է:

Հաշվի առնելով, որ Ձեր ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում Մ-10, Սևան Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2019 թվականի մայիսի 27-ին, ուստի նախարարությունը ընթառաջել է և կրկին անգամ փաստաթղթերը ուսումնասիրվել են, որի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Մ 10, Սևան Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ (դիտողությունը կցվում է), որոնց մի մասի վերաբերյալ նախորդ ուսումնասիրության ժամանակ բարձրաձայնվել է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են տեխնիկական բնույթի թերություններ (դիտողությունները կցվում են), որը եռօրյա ժամկետում շտկելու դեպքում նախարարությունը այն կընդունի:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախարարությունը Պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջ չի խախտել:

Իսկ արդեն 18.06.2019թ. թիվ 02/32.1/6347-19 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը /կցվում է/.

Ի պատասխան ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ուղղված ձեր 2019թ. հունիսի 7 թիվ 37/19 գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ Գեղաղքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված

նախագծահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ /դիտողությունները կցվում են/, որը հնարավոր չէ ընդունել ե ենթակա է վերադարձման:

Իրականացնելով նաև ներկայացված աշխատանքներում Պատվիրատուի կողմից արձանագրված վերոնշված գրություններին կցված դիտողությունները՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ- ն 18.06.2019թ. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն է ներկայացնում Պատվիրատուի կողմից եախագծահաշվարկային փաստաթղթերում արձանագրված թերությունները վերացրած և շտկված տարբերակով աշխատանքը՝ կցելով համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև փորձաքննության եզրակացության օրինակը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն աշխատանքները նախատեսվել են մինչև 2019թ. մայիսի 15-ը:

Միևնույն ժամանակ աշխատանքները շարունակվել են և Պատվիրատուի կողմից ընդունվել մայիսի 15-ից հետո նույնպես, որը հավաստվում է Պատվիրատուի վերոնշված գրություններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում ն ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո ողջամիտ ժամկետում:

Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելուն (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» «օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդորում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշված փաստական հանգամանքները փաստում են, որ աշխատանքների կատարման վերջնաժամկետի ավարտից հետո «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն շարունակել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարել աշխատանքները, որը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ընդունվել են և մի մասով արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք նույնպես շտկվել են ն նորից ներկայացվել նախարարությանը:

Նման պայմաններում, գտնում ենք, որ չի կարելի արձանագրել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով պայմանագիրը 27,05,2019թ. ՀՀ տրանսպորտի, կապի ն տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից միակողմանի լուծված լինելու փաստը, քանի որ այդ ժամանակաշրջանից հետո փաստացիորեն տվյալ պայմանագրի կողմերի միջև դեռևս շարունակվել են պայմանագրային հարաբերությունները, ն չնայած ժամկետի ուշացմանը Պատվիրատուն դեռևս շարունակել է ընդունել Ընկերության

ներկայացրած աշխատանքները և գնահատական տալ դրանց: Այլ կերպ ասած, փաստացիորեն բացակայում է պայմանագրի դադարված լինելու հիմքը:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նման փաստական հանգամանքներում Ձեր վարույթում քննված թիվ ՍՑ-ԼՕ-2019/17 ընթացակարգով 17.05.2019թ. կայացրած որոշմամբ արձանագրվեց, որ Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո, ըստ էության, չի առարկել ժամկետից ուշ ապրանքի մատակարարման դեմ և ընդունել այն:»:

Ելնելով վերոգրյալից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 15.05.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 27.05.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4-3» ծածկագրով պայմանագիրը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 27.05.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 22-ը պետք է իրականացներ Մ-10, Սևան–Մարտունի–Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500–կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարվել:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 21.05.2019թ. թիվ 08/14.1/6562-19 գրության համաձայն՝ *«Ի լրումն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2019 թվականի մայիսի 20-ի N 08/14.1/6505-19 գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված ՏԿՏՏՆ- ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4 պայմանագրի համաձայն Ձեր ընկերության կողմից մինչև 2019 թվականի մայիսի 15-ը անհրաժեշտ էր իրականացնել LT-10, Սևան-Մարտունի-Գետաւի միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ:*

Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է մինչև 2019 թվականի մայիսի 22-ը տեխնիկական առաջադրանքի համապատասխան ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ներկայացնել նախագծային աշխատանքները:

Նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը կկիրառի պայմանագրով նախատեսված 2.1.3 կետի պահանջները:»:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 05.06.2019թ. թիվ 08/14.1/7229-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 2019թվականի մայիսի 27-ի Ի-1 34/19 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված ՏԿՏՏՆ-*

ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4 պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 2019 թվականի մայիսի 27-ին միակողմանի լուծվել է:

Հաշվի առնելով, որ Ձեր ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում Մ-10, Սևան Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2019 թվականի մայիսի 27-ին, ուստի նախարարությունը ընթառաջել է և կրկին անգամ փաստաթղթերը ուսումնասիրվել են, որի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Մ 10, Սևան Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ (դիտողությունը կցվում է), որոնց մի մասի վերաբերյալ նախորդ ուսումնասիրության ժամանակ բարձրաձայնվել է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են տեխնիկական բնույթի թերություններ (դիտողությունները կցվում են), որը եռօրյա ժամկետում շտկելու դեպքում նախարարությունը այն կընդունի:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախարարությունը Պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջ չի խախտել:»:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 18.06.2019թ. թիվ 02/32.1/6347-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ուղղված ձեր 2019թ. հունիսի 7 թիվ 37/19 գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ Գեղաղքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված նախագծահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ /դիտողությունները կցվում են/, որը հնարավոր չէ ընդունել ե ենթակա է վերադարձման:»:*

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2019թ. թիվ 26/26-1/9185-2019 գրությամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը**

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն' պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում' նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում

է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-10, Սևան - Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500 - կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ տրանպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 15.05.2019թ.-ը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 21.05.2019թ. թիվ 08/14.1/6562-19 գրության համաձայն՝ *«Ի լրումն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2019 թվականի մայիսի 20-ի N 08/14.1/6505-19 գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4 պայմանագրի համաձայն Ձեր ընկերության կողմից մինչև 2019 թվականի մայիսի 15-ը անհրաժեշտ էր իրականացնել LT-10, Սևան-Մարտունի-Գետաշեն միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ 9-եղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ:*

Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է մինչև 2019 թվականի մայիսի 22-ը տեխնիկական առաջադրանքի համապատասխան ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ներկայացնել նախագծային աշխատանքները:

Նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը կկիրառի պայմանագրով նախատեսված 2.1.3 կետի պահանջները:»:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 05.06.2019թ. թիվ 08/14.1/7229-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 2019թվականի մայիսի 27-ի Ի-1 34/19 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-4 պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) 2019 թվականի մայիսի 27-ին միակողմանի լուծվել է:*

Հաշվի առնելով, որ Ձեր ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում Մ-10, Սևան Մարտունի-Գեղարքունիք միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2019 թվականի մայիսի 27-ին, ուստի նախարարությունը ընթառաջել է և կրկին անգամ փաստաթղթերը ուսումնասիրվել են, որի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Մ 10, Սևան Մարտունի-Գեղարքունիք միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ (դիտողությունը կցվում է), որոնց մի մասի վերաբերյալ նախորդ ուսումնասիրության ժամանակ բարձրաձայնվել է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա են տեխնիկական բնույթի թերություններ (դիտողությունները կցվում են), որը եռօրյա ժամկետում շտկելու դեպքում նախարարությունը այն կընդունի:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախարարությունը Պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջ չի խախտել:»:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 18.06.2019թ. թիվ 02/32.1/6347-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ուղղված ձեր 2019թ. հունիսի 7 թիվ 37/19 գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ Գեղաղքունիքի մարզի Արծվանիստ*

համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար կազմված նախագծահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ /դիտողությունները կցվում են/, որը հնարավոր չէ ընդունել և ենթակա է վերադարձման:»:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, Բողոքներ քննող անձը գտնում է, որ պայմանագիրը համարվում է լուծված այն դեպքում, երբ Պատվիրատուն միակողմանիորեն հրաժարվել է պայմանագիրը կատարելուց:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն հրաժարվելով Պայմանագրի կատարումից, միակողմանիորեն լուծելով այն, միևնույն ժամանակ իր 05.06.2019թ.-ի գրությամբ փաստել է, որ Պայմանագրի առարկան կազմող ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա տեխնիկական բնույթի թերությունները շտկելու դեպքում, նախարարությունը կընդունի կատարված աշխատանքները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի գործողությունները վկայում են պայմանագրային հարաբերությունների շարունակման, վերջինիս պայմանագրի կատարումից չհրաժարվելու մասին: Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2019թ. թիվ 26/26-1/9185-2019 գրությամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**